ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐԱՏՐ ՔՈՉԱՐՅԱՆ, Հայ ժողովրդի բնատարածքը պատմաքաղաքական իրադարձության ներքո, սկսյալ Բերլինի վեհաժողովից (1878). Մի քաղաքական-աշխարհագրական վերլուծություն և փաստագրություն, Dietrich Reimer հրատարակչություն, 1989 (աշխարհագրության ինստիտուտի մատենաշար, Բերլինի Ազատ համալսարան), 317 էջ, 9 քարտեզ:

Մենագրությունը բաղկացած է երկու գլխավոր բաժիններից։ Առաջինում Քոչարյանը նկարագրում է հայոց վիճակը իր նախնիների բնատարածքում՝ Հայկական լեռնաշխարհում։ Ուսումնասիրության առանցքը, սակայն, Արևմտյան Հայաստանն է։ Հայոց պատմությունը ուրվագծված է սկսյալ հայերի ցեղասերումից մինչև 1514-ը՝ Արևմտյան Հայաստանի գրավումը Թուրք-օսմանների կողմից։ Հաջորդում է մի գլուխ, արևմտահայերի կացության առնչությամբ, մինչև ռուս-թրքական պատերազմը՝ 1877—1878-ը, որտեղ հեղինակը խոսում է նրանց իրավական և ընկերական (սոցիալական) գիրքի մասին, որպես քրիստոնյա «միլեթի» (կրոնական համայնք) օսմանյան սուլթանատում։ Այնուհետև հեղինակը հանգամանորեն ջարադրում է անցյալ դարու առաջին կեսի բարեփոխումների պատճառները օսմանյան ներքին քաղաքականության մեջ։ Հարկավ այդ բարեփոխումները մնացին միայն թղթի վրա, քանզի մասամբ թելադրված էին Եվրոպայի կողմից ժամանակի սուլթաններին։ Բարեփոխումները, հատկապես գավառահայության համար, որևէ էական արժեք չներկայացրին։ Սակայն նրանք գրգռեցին, ինչպես հեղինակն է պարզաբանում, թրքական հետադիմական հակազդեցությունը և աշխուժացրին ճնշողական ուժերը, որոնք 1860-ից սկսյալ հարաճուն ազդեցություն ունեցան ազգությունների նկատմամբ կիրառվող քաղաքականությունում։ Այս կապակցությամբ Ժ. Քոչարյանը հանգամանորեն քննում է մուսալման ցեղախմբերի բնակեցումը 1860-ից մինչև 1880-ական թվականները Արևմտյան Հայաստանում, որով նկատառնված էր հայ ազգաբնակչության նոսրացումը իրագործել (ինչ որ գործնականում էլ եղավ), ինչպես նաև նահանգների բռնազբոսիկ սահմանների փոփոխումը այն տարածքներում, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում։

Ռուս-թրքական պատերազմը (1877—1878) և Բեռլինի վեհաժողովում (1878) Հայկական հարցի ոչ հետևողական կարգավորումը ելակետ հանդիսացան հետագա սուլթան Աբդուլ Համիդ Բ-ին, ինչպես նաև երիտթուրքերին և նրանց հետևող քեմալականությանը, բնաջնջման քաղաքականության։ Արդեն ռուս-թուրքական պատերազմի սկզբին, ըստ ժամանակակից անգլիացի պատերազմական թղթակից Նորմանի և այլ աղբյուրների վկայության, անկանոն քրդական միավորումները թուրքական բանակի հրամանատարության համաձայնությամբ կոտորում էին հայ խաղաղ բնակչությանը։

Եվրոպական դիվանագիտության հակասությունները արևելյան և հատկապես թրքական քաղաքականության խնդրում ըստ ամենայնի չարաշահվում է սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի կողմից։ Օսմանա-եվրոպական վեճը «հայկական բարենորոգումների» իրագործման կապակցությամբ ապարդյուն ձգձգվեց մինչև 1914-ը, մինչդեռ նույն ժամանակաշրջանում սուլթանը և իր հետևորդները չհապաղեցին երկրով մեկ կոտորածներ կազմակերպել և վերջապես անմարդկային պայմաններում տեղահանեցին վերապրող հայերին իրենց հայրենիքից և իրականացրին նրանց բնաջնջումը։ Այս զարգացման առանձին հանգրվանները՝ 1894—1896-ի կոտորածները և 1909-ի չարդերը, հեղինակը ներկայացրել է մանրամասն՝ աչքի առաջ ունենալով ամենաէական աղբյուրները։ Նույն ընդարձակությամբ է վերլուծում հեղինակը կիլիկիահայոց երկյակ բռնագաղթն ու կոտորածները 1920—1921 թթ., Արևմտահայաստանի վերագրավման ընթացքը՝ 1917 և 1920 թթ., թուրքերի ներխուժումը Արևելահայաստան՝ 1917-ին և 1920-ին և սրանց հետ զուգահեռ կատարված չարդերն ու ոճրագործությունները, Բաքվի 1918-ի սեպտեմբերյան հայոց չարդերը և նաև Ալեքսանդրեթի սանջակի հայերի տեղահանությունները։

Այս հիմնապաստառում 1915—1917-ի ցեղասպանությունը, արդարև, ներկայանում է ոչ որպես թրքական պատմության մեջ մի «սայթաքում», այլ որպես սարսափելի, բայց տրամաբանական գագաթնակետը մի կեսդարյա քաղաքականության, որի նպատակն էր հայոց լիովին բնաջնջումն ու տեղահանում-արտաքսումը իրենց հայրենիքից։ Գաղափարապատմականորեն.

դանգվածային բնաջնջման թրքական որոշումը, որպես վերջին և կտրուկ միջոց ազգային քաղաքականության մեջ, Ժ. Քոչարյանը համարում է թրքական ազգայնականության զարգացման յուրահատկությունը։ Նախ, թրքական ազգայնականությունը «ուշացած ըմբռնում» էր բաղդատած թուրքերի կողմից նվաճված ժողովուրդների հետ (հույներ, սերբեր, հայեր, արաբներ)։ Երկրորդ, թրքական ազգայնականությունը պիտի հաշվի առներ, որ օսմանյան հասարակության մեջ թուրքերը փոքրամասնություն էին կազմում։ Օսմանյան սուլթանության կենտրոնախույս ուժերի վերացումը, թրքական ազգայնականության կարծիքով, կարելի էր գլուխ բերել միայն բռնի ձուլումով, տեղահանությամբ կամ բնաջնջումով։

Ժ. Քոչարյանը իր ուսումնասիրության վերջին՝ «Ամփոփում և եզրահանգում» բաժնում անում է 1925-ին հրատարակված հոբելյանական ժողովածուից մի մեջբերում, որտեղ Թուրքիան հեգնանքով փաստորեն որպես համաշխարհային պատերազմում հաղթանակած կողմ է հայտարարվում, հակառակ իր՝ 1918-ի հոկտեմբերին անձնատուր լինելուն։

«Թուրքիան... սկզբից ևեթ անհասկանալի նպատակ չի ունեցել, շարունակ ու աներկբա իր նպատակը շեշտել է պատերազմում, որում նա հնարավորություն պիտի ունենար փրկվել հայկական վտանգից։ Քանի որ Թուրքիան այս խնդրում սկզբից ևեթ անխնա և վճռական էր, ուրեմն միակը եղավ կենտրոնական տերությունների մեջ, որը շահեց պատերազմը, իր բուն նպատակին հասնելով»։

Արևմտահայաստանի վերաբերյալ գլուխը ավարտվում է «Հայ փոքրամասնության կացությունը Թրքական հանրապետությունում» ակնարկով, սկսյալ Մուստաֆա Քեմալից մինչև մեր օրերը և ցուցակագրումը բոլոր այն ճնշումների, որին ենթակա է ներկայիս հայ համայնքը Թուրքիայում։

Արևմտահայաստանից հետո քննվում է Արևելահայաստանի կացությունը՝ Ռուսաստանին կցվելուց (1828) ի վեր։ Այս իրադարձությունը, ի միջի այլոց, կայունացրեց ցեղագրական հարաբերությունը Արևելահայաստանում։ Երբ ընդհակառակը, Արևմտահայաստանում թրքական ազգությունների քաղաքականությունը հանգեցնում էր հայոց քանակական հարաճուն նվազման և ի վերջո՝ բնաջնջման՝ Ռուսաստանին կցվելուց հետո ուժեղանում էր հայոց ազգային տարրը Արևելյան Հայաստանում։ Տասնյակ հազարավոր փախստականներ և գաղթականներ Արևմտահայաստանից և Պարսկաստանից, սկսյալ 1828-ից, եկան և հաստատվեցին Երևանի նահանգում։

Ժ. Քոչարյանը վերլուծում և արժեքավորում է այն կարևոր քաղաքական և մշակութային գործոնները, որ Արևելահայաստանը ստանում էր Ռուսաստանից և կամ նրա հեղափոխական մտավորականությունից, պատշաճ տեղ հատկացնում 1880-ական թվականներին ցարիզմի ազգային հետադիմական գործելակերպին՝ մշակութաեկեղեցական, քաղաքական բնագավառում։ Հայաստանի խորհրդայնացումն ընդգրկող շրջանում հատկապես ուսումնասիրվում են երկու տեսակետներ. ա) ներքին քաղաքականության հոլովույթը 1921-ից մինչև 1945-ը, բ) խորհրդա-թրքական հարաբերությունը և նրա ազդեցությունը Հայաստանի վրա։ Հեղինակի հատուկ ուշադրությանն են արժանանում հայկական այն բնատարածքները, որոնք գտնվում են ներկայիս Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ Արցախը, Նախիջևանը, Ախալքալաքը և Ախալցխան։ Բավականին հանգամանորեն շարադրվում են Արցախի պատմությունը, խոր հակասությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև։ Այստեղ հետազոտության ծանրության կշիռը կազմում են 1988-ի իրադարձությունները (Արցախյան շարժման սկիզբը, հայերի կոտորածը Սումգայիթում և այլուր)։

Մենագրության երկրորդ մասը նվիրված է սփյուռքահայությանը։ Բացառությամբ ներածականի, որը սփյուռքի ստեղծման և նրա հոլովույթի պատմությունն է, այս մասում հեղինակը կիրառել է հետազոտության վերլուծական և սոցիոլոգիական եղանակը։ Հեղինակի նպատակն է եղել չորս մեծ գաղութների օրինակով պարզաբանել նրանց կառուցվածքն ու խնդիրները։ Որպես օրինակ նա ընտրել է այն չորս երկրների համայնքները, որոնցում շուրջ երեք միլիոն սփյուռքահայեր են ապրում՝ Լիբանանը, Պարսկաստանը, Միացյալ Նահանգները և Ֆրանսիան։ Առաջին երկու երկրներից հայերի արտագաղթը զգալի դարձավ Պարսկաստանի իսլամական հեղափոխությունից հետո, ինչպես նաև լիբանանյան քաղաքական պատերազմի պատճառով։

Ժ. Քոչարյանը սփյուռքահայության այս արտագաղթը մտահոգիչ է գտնում, քանզի փորձը ցույց է տալիս, որ արտագաղթողները՝ Պարսկաստանից, Լիբանանից և այլն չեն հաստատվում այդ շրջատարածքի երկրներում, այլ փորձում են իրենց երթը շարունակել դեպի արևմտյան զարգացած երկրները՝ նախընտրելով Միացյալ Նահանգները, որի մեկ միլիոնի հասնող հայ-

կական դաղութը ամենամեծն է սփյուռքում։ Եվրոպայի մեջ ամենակարևորը ֆրանսահայ գաղութն է՝ շուրջ 400.000 անդամներով։ Մինչդեռ հայոց շփումը Ֆրանսիայի հետ ձգվում է մինչև խաչակրաց արշավանքները ու հայկական Կիլիկիան, հայկական համայնքների զարգացումը ԱՄՆ-ում սկիզբ է առնում ոչ հեռու անցյալից, միայն երկրորդ աշխարհամարտից հետո, երբ հայերի արտագաղթը դարձավ զանգվածային երևույթ։ Թեպետև մինչև օրս բացակա է տեղի գաղթօջախի մանրամասն ուսումնասիրությունը, այնուամենայնիվ, կարելի է եզրակացնել, որ ձուլման ճնշումն ու ուծացումը արևմտյան ճարտարվեստական երկրներում էականում շատ ավելի բարձր է, քան ավանդական համախմբված մերձավոր և միջին արևելյան պահպանողական բնույթի համայնքներում։ Ոչ որպես համահավասար իրավունքով քաղաքացիներ, փոքրամասնությունները կարողանում են իրենց մշակույթը և ազգային յուրահատկությունները պահպանել որպես քրիստոնյաներ։ Նրանք ներգրավված չեն երկրի ընկերական և քաղաքական կյանքում։ Լիբանանում իր հերթին մինչև 1975-ը տիրում էր մեծ ջանքերով ձեռք բերված չափավոր հավասարակշռությունը փոքրամասնությունների միջև։

Մերձավոր արևելքի հետ համեմատած, արևմտյան ճարտարվեստական հասարակության մեջ դավանանքի հարցն ունի ավելի քան անձնական բնույթ։ Առերևույթ հավասարության դինը, որ հայերը վճարում են, իրենց իսկ ազգային դիմագծի աղավաղումն է, այն դիմագծի, որ դարեր ի վեր ձևավորել է հայոց ազգային գիտակցությունը՝ ի շնորհս եկեղեցու և լեզվի։ Ամերիկյան օրինակը ամենահստակն է, ԱՄՆ-ի հայերի կյանքը էապես հայկականությամբ որոշված չէ, լեզվական ձուլումը, ամենաուշը ներգաղթած երրորդ սերնդում իր ավարտին է հասնում, հայերենը դառնում է, այսպես ասած, մանկական և առտնին խոսակցության լեզու, որով տանը խոսում են մանուկները մինչև դպրոց գնալը կամ էլ օգտագործվում է միայն ընտանիքի սեղմ շրջանակում (եթե այդ էլ տեղի է ունենում)։ Քանզի որքան վատ են տիրապետում մայրենի լեզվին, նույնքան էլ դժվար են ըմբռնում, այնպես որ, հենց սկզբից նախապատվությունը տրվում է անգլերենին։ Լեզվական և մշակութային տարբերությունը ավելի շատ խանգարիչ ազդակ է համահարթեցման և միատեսակության ձգտող հասարակության մեջ։ Վերջում մնում է միայն «եկեղեցիշերային հայրենասիրական գիտակցությունն», հայկականությունը սահմանվում է միայն կրոնով (այս տեսակետից ամերիկյան հասարակությունը անահման հարուստ է իր աղանդավանդանքներով), ազգային պարով, երաժշտությամբ, խոհանոցով և անդամակցությամբ կամ այցելությամբ որևէ հայկական ակումբին։

Իհարկե, Ժիրայր Քոչարյանը հիշատակում է նաև հակադիր հոսանքը։ Համայն հայ սփյուռքում, մասնավորապես Ֆրանսիայում և ԱՄՆ-ում, նկատելի է հայկական ազգային վերածնունդ։ Ներկայիս կարելի չէ ստույգ հայտնել, թե այս հետևանք է «Մերձավոր արևելքից ներարկված թարմ արյան՝ գաղթի»։ Այս պարագայում վերածնունդը կլիներ արտաքին ազդակ, որն իր վախճանը կունենա, երբ Մերձավոր արևելքից արտագաղթը իր ավարտին հասնի կամ ընդհատվի։

Այս հիմքից ելնելով, հեղինակը եզրակացնում է, որ իր երեք հազարամյա արհավիրքներով լի պատմության ընթացքում հայ ժողովուրդը այսպիսի հետևանքներով հղի իրադրության մեջ չի եղել, ինչպես վերջին 100 տարիներին։ Երբեք հայ ազգը այսպես փշրված և համայն աշխարհով մեկ սփռված չի եղել։ Ավելի քան երկու միլիոն հայերի բնաջնջումը՝ սկսյալ 1877-ից մինչև 1922-ը, ընթացավ Հայաստանի կողոպուտով և տնտեսական սաստիկ թշվառությամբ։ Մյուս կողմից, Արևելահայաստանում հայոց ցեղագրական միատարրությունը հասավ մինչ այժմ գոյություն չունեցած (առնվազն վերջին դարերում) չափերի, այնպես որ Հայաստանն այսօր իր 90 տոկոսից ավելի հայերով, Խորհրդային Միության հանրապետությունների մեջ ամենամիատարրն է։

Թեպետև հայկական գաղութների հնամենիությունը հասնում է մինչև ուշ միջնադար, այնուամենայնիվ, զանգվածային գաղթը հետևանքն է մեր նոր ժամանակների՝ վերն արդեն շարադրված իրադարձությունների և դրա հետ կապված՝ բուն հայրենիքից հայոց տեղահանության։ Ներկայիս, գրում է հեղինակը, ականատես ենք սփյուռքահայության կյանքում տեղի ունեցող ծավալուն փոփոխությունների և տեղաշարժերի, որի հետևանքով ավելի և ավելի հայեր ակա՛ա այնպիսի երկրներում են հայտնվում, որտեղ շատ նվազ հեռանկարներ ունեն որպես ազգային հավաքականություն վերապրելու։ Այս վտանգը՝ սփյուռքահայության մարումը, կլիներ ավարտը արևմտահայոց բնաջնջման։ Նրանց գիտակից դարձնելը և հարատևելու կարելիություններ որոնելը Ժ. Քոչարյանը համարում է իր ուսումնասիրության բուն դրդապատճառը։

ԹԵՍՍԱ ՀՈՖՄԱՆ (Բելգիա)